Հայտարարություն

21.10.2021 թ.

ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն ՀՀ Կոտայքի մարզի << Նոր Գեղիի Յու. Երիցյանի անվան N 2 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ- ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար :

Հաստատության տնօրենի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են ՝

1. ՀՀ քաղաքացիությունը
2. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը / հավաստագիր / :

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են ՝

1. Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը / բնօրինակի հետ /
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի / հավաստագրի / պատճենը բնօրինակի հետ :
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով
5. Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակներ հետ:

Փատաթղթերն ընդունվում են 2021 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 10 -ը ներառյալ ամեն օր ժամը 10 : 00 –ից մինչև 16 : 00 ներառյալ բացի շաբաթ կիրակի և ալ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 24 -ին ժամը 14:00 –ին ՀՀ Կոտայքի մարզի << Նոր Գեղիի Յու. Երիցյանի անվան N 2 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում:

Հասցեն ՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի , Ց. Ղազարյան փ.35 շ.:

Տեղեկությունների համար դիմել Տարոն Բարսեղյանին

Հեռախոսահամար՝ 098-82-03-38

Էլ. Հասցե՝ nogegh2@schools.am: